«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»_____

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան

պետական համալսարանի ռեկտոր

Ֆիզմաթ գ.թ., դոցենտ Ե.Ս. Սերոբյան

20-ը նոյեմբերի 2024 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՋԵՄՄԱ ՍԱՄՎԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ԾԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ և ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» թեմայով ատենախոսության:

Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սոցիալական հոգեբանության ոլորտում դեռևս պատշաճ չուսումնասիրված տարեցների սոցիալ-հոգեբանական առաջատար դետերմինանտների համահարաբերակցության խնդրի բացահայտման ու նրանց տարբերակված սպասարկման կազմակերպմանը:

Թեմայի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է վերջին տարիներին Հայաստանում բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների մասնաբաժնի աճով, ինչը պահանջում է առավել մեծ ուշադրություն նրանց սոցիալական, հոգեբանական, բժշկական և այլ խնդիրներին, որոնց լուծումն անհնար է առանց սոցիալ-հոգեբանական սպասարկման համակարգի ամրապնդման և ակտիվ երկարակեցության ապահովման միջոցառումների ներդրման: Նշվածը իր հերթին պահանջում է տարեցների սոցիալ-հոգեբանական դետերմինանտների համակարգված գիտական լուրջ ուսումնասիրություն տարեցներին տարբերակված սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով:

Աշխատանքում միանգամայն տեղին ենք համարում ատենախոսի կողմից ֆունկցիոնալության միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների կիրառումը առողջության և կենսագործունեության սահմանափակումների վերաբերյալ (ՖՄԴ, 2001թ., ՄԱԿ), ինչը թույլ է տվել վեր հանել շրջապատող միջավայրի և

անհատական առանձնահատկությունների ազդեցությունները և անձի ակտիվության վրա ազդող գործոնները, որոնք ֆունկցիոնալ սահմանափակումների, կարիքների և պահպանված հնարավորությունների բազմամասնագիտական գնահատման նոր հնարավորություններ են ընձեռում: Ատենախոսության արդիականությունն այն է, որ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների, ծերունական տարիքում դրանցից առաջնայինների բացահայտումը՝ որպես կյանքի որակի բարձրացման հիմնական գործոններից մեկը, հետազոտական անհրաժեշտություն է Հայաստանում:

Ատենախոսության ներածությունն ունի հստակ կառուցվածք, պատկերացում է տալիս հետազոտության տրամաբանության, ընտրակազմի, մեթոդների, առաջադրվող խնդիրների վերաբերյալ:

Ներածական մասում ներկայացված է ուսումնասիրվող հիմնախնդիրը, դրա տեսական և գործնական նշանակությունը, հստակ ձևակերպված է վարկածը, աշխատանքի նպատակը, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության երեք գլուխները միմյանց լրացնելով կազմում են մեկ տրամաբանական ամբողջություն: Հեղինակին հաջողվել է մանրակրկիտ տեսական վերլուծության միջոցով հիմնավորել առաջ քաշված վարկածը՝ ուսումնասիրելով առնչվող բազմաձավալ գրականություն:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 127 էջ (առանց հավելվածների), աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը ներկայացրել է տարեցների սոցիալ-հոգեբանական դետերմինատների ուսումնասիրման և վերլուծության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հոգեբանական գրականության մանրակրկիտ վերլուծությունը: Ուշադրություն է դարձվում բնակչության ծերացման և ծերության սոցիալ- հոգեբանական հիմնախնդիրներին, սոցիալականացմանը, ծերացման ապրման ձևերի ուսումնասիրմանը, տարեցների սոցիալականացման հիմնախնդիրներին, նոր

սոցիալական դերերի հարմարմանը: Ներկայացված են տարեցների հետ աշխատանքի հոգեբանական տեսական և գործնական մոտեցումներ:

Ատենախոսության երկրորդ գլխում, որը կազմված է չոր ենթագլուխներից, ներկայացվել և քննարկվել են Հայաստանում տարեց անձանց սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները որոշող գործոնները: Առանձնակի ուշադրություն է նվիրվել միայնակությանը (էջ 81-82):

Քննարկվել են սոցիալականացման տարիքային ինստիտուտները, «դատարկված բույն» համախտանիշը և ընտանիքի դերը սոցիալական կապերի պահպանման գործում:

Անդրադարձ է կատարվել տարեցների հոգեկան առողջության հարցերի հետ կապված հիմնախնդիրներին, ներկայացնելով իրականացված հետազոտությունների արդյունքները, որոնք ևս հաստատում են տարեց մարդկանց ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական դետերմինանտների համալիր գնահատման անհրաժեշտությունը (էջ 68-72):

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է աշխատանքի էմպիրիկ հենքը, որը կազմում են բազմաթիվ հետազոտությունների արդյունքներ, վիճակագրական տվյալներ, Հայաստանում անցկացված բնակչության ծերացման խորքային հետազոտության տվյալները, 2016թ.-ից 2022 թվականների շահառուների շրջանում անցկացված հետազոտությունների տվյալները, Հայաստանի և ԱՊՀ մյուս երկրների տարեց մարդկանց սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների հետազոտությունների համեմատական արդյունքները:

Անցկացվել է սոցիալական սպասարկման ստացիոնար հաստատություններում գտնվող, ինչպես նաև իրենց տանն ապրող և սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոններ հաճախող տարեց մարդկանց ունեցած սոցիալական շփումների կարևորության հետազոտություն: Տարեց մարդկանց ունեցած շփումների, անձնական ձեռքբերումների, նպատակների կարևորության բացահայտման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է հետազոտության մեջ հակադիր պնդումների մեթոդիկայի օգտագործումը ըստ «Սոցիոտրոպություն - անկախություն» սանդղակի նորզելանդական վարկածի, որը ներառում է չորս սանդղակ «Սոցիալական անվստահություն», «Կախվածություն», «Կապվածություն», «Ինքնաբավություն»:

Ընդանուր առմամբ կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ հիմնական բավարարվածությունը պայմանավորված է ընտանեկան մտերիմ հարաբերություններով, ընտանեկան արժեքներով, լոյալությամբ ու բարենպաստ միջավայրով:

Հաշվի առնելով տարեց մարդկանց համար ունեցած սոցիալական շփումների կարևորությունը, ատենախոսը կարծում է, որ այս դետերմինանտը, որը հատկապես դրսևորվում է հասուն տարիքում, պետք է հաշվի առնվի սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման (ձևեր և մեթոդներ, այլընտրանքային ակտիվացնող տեխնոլոգիաներ) ժամանակ, ինչը հաստատում է դետերմինանտներին համալիր մոտեցման անհրաժեշտության մասին աշխատանքի վարկածը: Ստացված տվյալները հաստատում են դերային մոտեցման և տարեց մարդկանց կենսունակության և նրանց կյանքի իմաստի երկարացման մեջ ընտանիքի դերի կարևորության մասին ենթավարկածը:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները հաստատում են ենթադրությունը, որ դեպրեսիայից ու տագնապայնությունից խուսափելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել տարեց մարդկանց ինքնագնահատականը, նրա պահանջվածության զգացումը բարձրացնելու համար, իսկ ստացիոնար հաստատություններում սպասարկումը կազմակերպելու համար նպատակահարմար է նաև տնային մթնոլորտի ստեղծումը (նրա սենյակում մարդու համար հիշարժան, թանկ և ջերմ հիշողությունների իրերի, լուսանկարների, նկարների առկայություն): Տարիքային, ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական դետերմինանտները, անհատական առանձնահատկությունները և տարեց մարդկանց դեպրեսիայի ու տագնապայնության վրա ազդող իրավիճակային գործոնները հաշվի առնելը կարևոր են կյանքից բավարարվածություն ստանալու, տագնապայնության ինչպես նաև դեպրեսիայի մակարդակը նվազեցնելն ապահովող համապատասխան աջակցող, խթանող միջոցների ձեռնարկման համար (էջ 91-93):

Հաշվի առնելով միջազգային փորձը և Հայաստանում աշխատանքի փորձը՝ հետազոտությունում քննարկվում է տարեց մարդկանց դետերմինանտների համալիր գնահատման հարցում կենսահոգեսոցիալական, միջգիտաճյուղային,

բազմամասնագիտական մոտեցման նպատակահարմարությունը նրանց անհատական պահանջմունքների, պահպանված հնարավորությունների, ակտիվության և մասնակցության որոշման նպատակով ՖՄԴ-ի միանգամայն արդարացված դոմենների օգնությամբ:

Վերոնշյալը հաստատում է վարկածն առ այն, որ տարեց մարդկանց ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը և սոցիալ-հոգեբանական ծառայությունների նրանց կարիքի չափանիշները որոշելու համար կարող են կիրառվել ֆունկցիոնալության, կենսագործունեության և առողջության սահմանափակումների միջազգային դասակարգման սկզբունքները և մոտեցումները:

Ստացված պատասխանները հաստատում են ենթադրությունն այն մասին, որ՝ ա) գոյություն ունեցող ծառայությունները չեն ծածկում տարեց մարդկանց պահանջմունքների ողջ սպեկտրը և անհրաժեշտ է անցկացնել կարիքի խորքային գնահատում. բ) անհրաժեշտ է անցկացնել մարդու անհատական պահանջմունքների համալիր գնահատում՝ հաշվի առնելով նրա դետերմինանտները. գ) գոյություն ունի այլընտրանքային նորարարական ծառայությունների պահանջ. դ) հարկ է տարբերակել ծառայությունները՝ հատկապես հաշվի առնելով հոգեկան առողջության վիճակը. ե) սպասարկվող մարդկանց հուզական վիճակում փոփոխությունների բացակայությունը կամ աննշան փոփոխությունները վկայում են ծառայությունների ստանդարտ հավաքածուի և անհատական, հասցեական ծառայությունների բացակայության կամ անբավարարության մասին:

Ատենախոսության եզրակացություններն արտացոլում են հետազոտության արդյունքները:

Խորը և բազմաբնույթ վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է լուծել առաջադրված հիմնական խնդիրները և հանգել կոնկրետ, հստակ եզրակացությունների, որոնք ներկայացնում են ատենախոսության պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթների պահանջները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և արտացոլում է հիմնական բովանդակությանը:

Ամփոփելով, կարելի է ընդհանրացնել, որ կատարված ծավալուն բազմաբովանդակ հետազոտությունը կարող է լրացնել ոլորտի բացը և հիմք հանդիսանալ հետագայում նմանատիպ հետազոտություններ անցկացնելու համար:

Աշխատանքը կարող է նաև խթան հանդիսանալ սոցիալական-հոգեբանական ծառայությունների կազմակերպման ոլորտի բարելավման, տարեցներին հասցեական օգնության ցուցաբերման, տարբերակված ծառայությունների տրամադրման, չափանիշների մշակման և կիրառման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ աշխատանքը զերծ չէ որոշ անճշտություններից և թերություններից.

1. Արդիականությունը հիմնավորումներով է, բայց ձևակերպման առումով երկարաշունչ և ընդհանրական է, կարելի էր ներկայացնել հակիրճ, որովհետև կարծում ենք ակնհայտ է թեմայի կարևոր և արդիական լինելը: (էջ 3-5):
2. Կարծում ենք, որ գլուխ 1-ի առաջին ենթավերնագրում պետք էր առավել մանրամասնել տարեցների, ծերերի և զառամյալ ծերության շրջաբաժանման, ֆիզիոլոգիական և պաթոլոգիական ծերացման վերաբերյալ վերլուծությունները, հերոնտոլոգիական կենսաբանական հիմքը:
3. Աշխատանքն առավել կշահեր, եթե փորձարարական հետազոտություններն աշխատանքում ներկայացվեին առավել հստակ, մասնավորապես՝ էջ 97-99-ում հարցման արդյունքները կարելի էր ներկայացնել գծապատկերով:
4. Աշխատանքում առկա են նաև որոշ տեխնիկական վրիպակներ. (տես՝ աղյուսակ 9 էջ 88; գրականության ցանկում որոշ աղբյուրների էջերի քանակը նշված չէ, օր.՝ 33, 54 աղբյուրների):

Նշված անճշտությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, ատենախոսությունը կատարված է գիտական բարձր մակարդակով, ունի տեսական և գործնական նշանակություն: Այն ունի ինքնին ավարտուն տեսք, շարադրված է գրագետ, գիտական ոճով, պահպանված է ուսումնասիրված նյութերի տրամաբանական կապը, հստակ ներկայացված են հետազոտության արդյունքները:

Եզրակացություն՝

Գնահատելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը, կարելի է հավաստել, որ Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի «Ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեցների տարբերակված սպասարկման կազմակերպումը Հայաստանում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական ուսումնասիրություն է: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԺԹ.00.03 - Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03-Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է ՇՊՀ-ի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 2024թ. նոյեմբերի 20-ի ընդլայնված նիստում՝ (արձանագրություն թիվ 4), որին մասնակցել են՝ Վլադիմիր Կարապետյանը՝ հ.գ.դոկտոր, պրոֆեսոր, Արտաշես Մկոյանը՝ մ.գ. դոկտոր, պրոֆեսոր, Անահիտ Կիրակոսյանը՝ մ.գ.դոկտոր, Լուսիկ Ղուկասյանը՝ մ.գ.թ., դոցենտ, Կարինե Սահակյանը՝ հ.գ.թ.,դոցենտ, Արմինե Թադևոսյանը՝ հ.գ.թ.,դոցենտ, ՄարինեԲեյբությանը՝ հ.գ.թ., Հռիփսիմե Ֆարզադյանը՝ մ.գ.թ.:

ՇՊՀ-ի հոգեբանության
և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., դոցենտ Կ. Սահակյան

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Կ Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կ.գ.թ., դոցենտ Կ. Պետրոսյան